ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ՝ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

2020 թվականի հունիսի 30-ին՝ ժամը 11:00-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցի քննարկումն անցկացնել հետևյալ հատուկ ընթացակարգով.

1) «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Պ-677-29.06.2020-ՊԻ-011/0), «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-677[1]-29.06.2020-ՊԻ-011/0) նախագծերի փաթեթի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում.

2) առաջին ընթերցմամբ ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Պ-677-29.06.2020-ՊԻ-011/0), «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-677[1]-29.06.2020-ՊԻ-011/0) նախագծերի փաթեթի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվական, հունիսի 30
Երևան

ԱԺՈ - 397 - Լ